



ՀԱՏՎԱԾՆԵՐ ԵՂԻՇԵԻ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՎԱՐԴԱՆԻ ՃԱՌԸ

Ի բազում պատերազմունս մտնալ է իմ և ձեր ընդ իս. է ուրեք՝ զի քաջապէս յաղթեցաք թշնամեացն, և է ուրեք՝ զի նոքա մեզ յաղթեցին. և բազում այն է՝ որ յաղթող գտնալ եմք և ոչ յաղթեալք: ...Եւ մեք իսկ աւասիկ յիւրաքանչիւր մարմինս ունիմք վէրս և սպիս բազումս:

...Արդ, աղաչեմ զձեզ, ո՛վ քաջ նիզակակիցք իմ, մանաւանդ զի բազումք ի ձէնջ լաւագոյնք էք քան զիս արութեամբ, և զահու ի վեր ըստ հայրենի պատռտոյն. բայց յորժամ ձերով կամօք և յօժարութեամբ առաջնորդ և զօրագլուխ ձեզ կացուցէք, հեշտ և բաղձալի թուեսցին բանք իմ ի լսելիս մեծամեծաց և փոքունց: Մի՛ երկուցեալ զանգիտեսցուք ի բազմութենէ հեթանոսացն, և մի՛ յահագին սրոյ առն մահկանացուի զթիկոնս դարձուացուք. զի եթէ տացէ Տէր յաղթութիւն ի ձեռս մեր, սատակեսցուք զզօրութիւն նոցա, զի բարձրացի կողմն ճշմարտութեանն. և եթէ հասնալ իցէ ժամանակ կենաց մերոց սուրբ մահուամբ պատերազմիս, ընկալցուք խնդութեամբ սրտիւ. բայց միայն յարութիւնս քաջութեան՝ վատութիւն մի՛ խառնեսցուք:

Իսկ արդ, յերկուս և յերիս կողմ Տէր ինքնին մեծաւ զօրութեամբ օգնեաց մեզ, որպէս զի զանուն քաջութեան ժառանգեցաք, և զզօրսն արքունի շարաշար հարաք, և զմոզսն անողորմ սատակեցաք, և զպղծութիւն կռապաշտութեանն ի տեղեաց տեղեաց սրբեցաք, զանօրէն հրամանս թագաւորին եղծաք ապականեցաք, զխռովութիւն ծովոնց ցածուցաք, լեռնացեալ ալիքն դաշտացան, բարձրադէզ փրփուրն սպառեցաւ, զաղանացեալ սրտմտութիւն դադարեաց: Որ ի վերայ ամպոց որոտայր, նման եղեալ՝ քան զսովորական բնութիւնն ի վայր գտաւ ընդ մեզ խօսելով: Որ բանիւ հրամանաւ կամէր կատարել զչարութիւնն իւր ի վերայ Սուրբ Եկեղեցւոյ, արդ աղեղամբ և նիզակաւ և սրով կռուի: Որ իբրեւ զհանդերձ կարծէր ունել մեզ զքրիստոնէութիւնն, արդ իբրեւ զգոյն մարմնոյ՝ չկարէ շրջել, թերեւ և ոչ այլ կարացէ մինչև ի կատարած: Քանզի հիմունք սորա հաստատութեամբ եղեալ են ի վերայ վիմին անշարժութեան, ոչ ի վերայ երկրի, այլ ի վեր յերկինս, ուր ոչ անձրեք իջանեն և ոչ հողմք շնչեն և ոչ հեղեղս յարուցանեն: Եւ մեք թէպէտ և մարմնով յերկրի եմք, այլ հաւատովք յերկինս եմք շինհալ, ուր ոչ ոք կարէ հասանել յանձնագործ շինուածն քրիստոսի:

Հաստատուն կացէք յանշուշտ զօրագլուխն մեր, որ ոչ երբեք մտաւացի զգործս նահատակութեան ձերոյ: Ո՛վ քաջք, մեզ այս մեծապէս է՝ զոր կատարեաց Աստուած ի ձեռն մերոյ բնութեանս, յորում և զօրութիւնն Աստուծոյ մեծապէս երևի:

...Եւ ահա եկն եհաս ժամանակ, զի զամենայն զկեղտ անուն ի մէնջ ի բաց բարձրուք: Յայնժամ իբրեւ զթախծեալ սգաւոր՝ յոգի և մարմին էիք տըրտմեալք, այսօր զուարթացեալ և զգաստացեալք յերկոսեան առ հասարակ եմք լրջացեալք. քանզի և զՏէրն բարերար ընդ մեզ տեսանեմք յառաջնորդութիւն. չէ մեր մարդ զօրավար, այլ զօրագլուխն ամենայն մարտիրոսաց: Երկիւր՝ թերահաւատութեան է նշանակ. զթերահաւատութիւն մեք ի մէնջ վաղ մերժեցաք, ընդ նմին և երկիւրն փախիցէ ի մտաց և ի խորհրդոց մերոց:

ՂԵՂՈՆԴ ԵՐԵՑԻ ՃԱՌԸ

... Եւ այլ զի՛նչ ևս երկրորդեցից առաջի ձերոյ քաջ նահատակութեանդ, զի քան զիս տեղեկագոյնք և հմուտք էք Սուրբ Կոտակարանացն: Դաւիթ ի մանկութեան ժամանակին քարիւ կործանեաց զմեծ րլուրն մսեղէն, և ոչ ինչ զանգիտեաց յահագին սրոյ հսկային. ցրուեաց զգունդս այլազգեացն, և ապրեցոյց զզօրսն ի մահուանէ, և զժողովուրդն ի գերութենէ. և զանդրանիկ թագաւորացն Իսրայէլի, և անուանեցաւ Հայր Որդւոյն Աստուծոյ: Նա անուանեցաւ առ ի պէտս ժամանակին, և դուք ճշմարտիւ ծնեալք ի Սուրբ Հոգւոյն որդիք էք Աստուծոյ և ժառանգակիցք Քրիստոսի: Մի՛ ոք զձեր բաժինն ի ձէնք հատանիցէ, և զձեզ օտարախորթ արարեալ՝ տարաբաժին հանիցէ:

Ապաքէն նոյն Տէր է, որ ի սկզբանէ մինչև ցայսօր և առ յապայս, և յաւիտեանց յաւիտեանս, և անդր քան զամենայն յաւիտեանս: Ոչ նորոգի, զի ոչ հնանայ. ոչ մանկանայ, զի ոչ ծերանայ. ոչ փոխի անյեղեկով բնութիւնն Աստուծոյ. որպէս և ինքն իսկ ասէ բերանով սուրբ մարգարէիցն. Ես և՛մ, ես ե՛մ, ի սկզբանէ նոյն մինչև յաւիտեանս. ոչ տամ զփառս իմ այլում, և ոչ զքաջութիւնս իմ դրօշելոց:

Ջայս գիտելով, եղբարք, մի՛ թուութեամբ լքանիցիմք, այլ պնդութեամբ սրտիւ և հաստատուն հաւատովք կամակարութեամբ յարձակեցուք ի վերայ թշնամեացն, որ յարուցեալ զան ի վերայ մեր: Մեր յոյսն մեզ կրկին երևի. և թէ մեռանիմք՝ կեամք, իսկ եթէ մեռուցանեմք՝ մեզ նոյն կենանք առաջի կան: Յիշեսցուք զբանն առաքելոյ, որ ասէ, թէ փոխանակ ուրախութեան՝ որ նմա առաջի կայր, յանձն էառ զհամբերութիւն մահու, և մահու խաչի. վասն այսորիկ և Աստուած զնա առաւել բարձրացոյց, և ետ նմա անուն՝ որ ի վեր քան զամենայն անուն. զի յանուն Յիսուսի Քրիստոսի ամենայն ծունր կրկնեացի երկնատրաց և երկրաւորաց և սանդարամետականաց:

Օ՛ն անդր, ի բաց թողցուք զխաւարային խորհուրդս մոլորելոցն. եղկելիս և ողորմելիս քան զամենայն մարդիկ զնոսա համարեցուք. մանաւանդ զի կամօք են կուրացեալք և ոչ ի հարկէ, և ոչ ևրբեք զտցին զճանապարհն ճշմարտութեան: Այլ մեր բացահայեաց աջօք տեսեալ զլոյսն երկնաւոր, մի՛ պատահեցէ մեզ խաւարն արտաքին: Զի ոչք էին ի խաւարի, և կն առ նոսա լոյսն ճշմարտ, կուրացեալք վրիպեցան ի կենացն. իսկ որք ընկալալքո՞ հաւատովք՝ որդիք էք և ոչ օտարախորթք, սիրելիք և ոչ թշնամիք, բաժանորդք և ոչ ժառանգորդք վերին իմանալի քաղաքին:

(Նղիշէի վարդապետի վասն վարդանայ և հայոց պատերազմին, Հինգերորդ յեղանակ)

